

Շահրիմանյան Ս., Տնկարանություն կամ ֆլորա Հայաստանի, Տփլիս, 1818:  
 Պատկանյան Ռ., Բերք Հայաստանի. ՀԱՍՏ ԳԱ լեզվի եւ գրականության ֆոնդ, 1879:  
 Պողոսյան Ա. Գ., Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչեւ 18-րդ դարը, Երեւան, 1960:  
 Վարդանյան Ս. Ա., Միջնադարյան հայ բժշկականների հայացքների ու նրանց բուժման վերաբերյալ Բնագիտ. եւ տեխնիկայի պատմ. Հայաստանում, պր. VIII, 1987:  
 Красная книга Армянской ССР, т. I животные, т. II растения, Изд. Айастан, Ереван, 1987, 1990.  
 Межлумян С. К., Палеофауна эпох палеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972., Изд. Луйс, Ереван, 1993:  
 Труды Ботанич. инст. Арм. фил. АН СССР, т. 2, 1941  
 Тахтаджян А.Л. (редактор) Флора Армении, т. I-IX, Изд. АН Арм. ССР, Ереван, 1954-1995.  
 Edmondson J. R., Lack H. W. The Turkish and Caucasian collections of C. Koch, Noter Roy. Bot. Gard. Edinburg, 35, 3, 1977.

Барсегян А.М. - Описание растительного мира Армении и его использования по древним рукописным источникам - На основании анализа данных древнеармянских рукописей, лечебников, археологических раскопок, наскальных изображений, архитектурных, этнографических наследий автором сделана попытка воссоздать историю использования флоры, фауны и растительного покрова Армении. За 3-4 тысячелетия до нашей эры, близ с. Гарни в жилище, относящегося к первой стадии эпохи бронзы, обнаружены косточки винограда, абрикоса, обугленные зерна пшеницы, свидетельствующие, что Армения - родина не только косточковых Armenica vulgaris, Vitis vinifera, но и диких пшениц - Triticum agaraticum, T. urartu.

Араратская или армянская кошениль (вордан кармир) с незапамятных времен известна из долины среднего течения р. Аракс. Краска, получаемая из кошенили, очень высоко ценилась в прошлом. Окрашенные ею ткани, пряжа, ковры были желанной добычей завоевателей. Знаменитый пурпур "цирани" считался привилегией армянского царского дома.

Армянская кошениль играла большую роль в культурно-экономической жизни древней Армении. Сохранившиеся до сегодняшнего дня красочные армянские миниатюры, уникальные книги Матенадарана, настенные церковные рисунки во многом своему существованию обязаны "армянской" краске (так называли ее в древнем Востоке).

Помимо широкого использования "армянского кашемира" на Ближнем Востоке, эта краска экспортировалась и в страны Европы, где также пользовалась большим успехом.



## «ԷԿՖՐԱԶԻՍ» ԺԱՆՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՄԵՉ

(պատմաբանասիրական նկարագրություններ հայ արվեստի կիսավեր եւ ավերված հուշարձանների)

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ

867 թվականին արյունալի հեղաշրջման հետեւանքով Բյուզանդական կայսրության գահին բարձրացավ հայազգի Վասիլ I, որով եւ հիմնադրվեց Մակեդոնական հարստությունը: Վասիլ I կատարեց տնտեսական ու քաղաքական մի շարք լուրջ բարեփոխումներ: Առավել շոշափելին մշակույթի նոր վերելքն էր: Կատարվում են եկեղեցական, պալատական ու պաշտպանական ծավալուն շինություններ: Ժամանակակիցների վրա ցնցող տպավորություն է թողել հատկապես կայսեր հովանավորությամբ կառուցված «Նոր եկեղեցին», չքնաղ մի կառույց, որն, ըստ միապետի, պետք է գերազանցեր 532-537 թթ. կառուցված Սուրբ Սոփիայի հռչակավոր տաճարը: Ցավոք, Վասիլ I հպարտությունը հանդիսացող այդ տաճարը կործանվեց խաչակրաց արշավանքների ժամանակ: Սակայն եկեղեցու մանրամասն նկարագրությունը՝ ճարտարապետական համակարգը, խճանկարները, որմնակարները, թողել է Ֆոտեոս պատրիարքը: Սիւսայի ժամանակ եւ հենց այդ հուշարձանի նկարագրությունից էլ առաջացավ արվեստի ու գրականության համադրության մի նոր ժանր, որը կոչվեց «Էկֆրազիս»:

Ճակատագրի հեգնանքով հայոց մշակույթի պատմությանը վիճակվեց ամենից ավելի ապավինելու օտար ավերում ստեղծված այդ հետաքրքրական ժանրին: Հայտնվելով հարեւան հզոր երկրների արյունալի բախումների թատերաբեմում, շարունակաբար ենթարկվելով ռազմատենչ ցեղախմբերի ավերող ասպատակություններին ու նվաճումներին, Հայաստանում արվեստի, մանավանդ կողոթային, հուշարձանների մեծ մասը կործանվում է: Այսօր պատմագրությունն ու արվեստագիտությունն այդ հուշարձանների մասին տեղեկություններ քաղելու համար ստիպված է դիմելու հիշյալ ժանրի հայկական նյութերին: Ասենք, որ մինչ Ֆոտեոս պատրիարքն էլ դեռեւս վաղ միջնադարում հայ պատմիչները առանձնահատուկ հետաքրքրություն դրսեւորել են արվեստի գործերի նկատմամբ. միայն թե դրանք եղել են համառոտ կամ էլ առասպելական նկարագրություններով համեմատված: Այսպես, Մովսես Խորենացին պատմելով Ասորեստանի Շամիրամ թագուհու Հայաստանում կատարած շինությունների մասին, գրում է. «...եւ այսպես խիստ լարված աշխատանքի մեջ պահելով քիչ տարիներից հետո գլուխ է բերում հրաշալի հորինվածքը, ամուր պարիսպներով ու պղնձից շինած դռներով: Քաղաքի մեջ շինում է նաեւ բազմաթիվ ընտիր ապարանքներ, կրկնահարկ եւ եռահարկ, զարդարված տեսակ-տեսակ գույնզգույն քարերով...»: Դա, փաստորեն, առաջին տեղեկությունն է հայոց աշխարհում խճանկարի (մոզաիկա) գործածության մասին, որը կարծես թե հատուկ ուշադրության չի արժանացել հայ արվեստագիտության կողմից: Մեկ ուրիշ դեպքում Խորենացին իր պատմության երկրորդ գրքում (մասն LU եւ LP) անդրադառնում է նաեւ Աբգար թագավորի հետ կապված Փրկչի կենդանագիր պատկերի պատմությանը:

Խորենացու մոտ մի ավանդություն էլ կապված է Հոգեաց վանքում պահպանվող Տիրամոր պատկերի հետ: Քրիստոնեական պաշտամունքի այդ նշանավոր ու նվիրական սրբավայրը գտնվում է Վան քաղաքից 40 կմ հարավ, Շատախ տանող ճանապարհին, գեղատեսիլ Կողակ ձորի մեջ: Այստեղից է սկզբնավորվում Տիգրիս գետը: Ըստ ավանդության, 5-րդ դարում «Վերափոխման» տոնի կապակցությամբ վանքի հայրերը ձեռք են բերում Աստվածամոր մանկան հետ պատկերը եւ այն հանդիսավորությամբ տեղադրում Հոգեաց վանքի Ս. Աստվածածնի եկեղեցում: Այդ կապակցությամբ Վասպուրականի իշխան Ապիակ Արծ-

1 Ի դեպ, հայաժառանգ այդ հարստության ժամանակ էր, երբ Բյուզանդիան լայն կապեր է հաստատում Ռուսիայի հետ: Կոստանդնուպոլսի պալատը մեծ լուսավորչներ Կիրիլլն եւ Մեթոդիին ուղարկում են վիլիկոմորալյան տիրույթներ, որտեղ հորայրները սրեղծում են սլավոններին այբուբենը:  
 2 Հունարեն քառակապակցություն է, որը նշանակում է «նկարագրի, տպավորությունն անդրադարձնող մանրամասն նկարագրելով»:  
 3 Իհարկե, Խորենացին չգիտեր, որ այդ կառույցները Շամիրամի հետ կապ չունեն, որ միայն շրջանում գոյություն ունեն Ռուսարթական պետությունը:  
 4 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երեւան, 1990, էջ 35:  
 5 Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 96-97:  
 6 Ըստ ավանդության, Հոգեաց վանքի տեղում նախկինում կառուցված է եղել Անահիտ աստվածուհու հիբանոսական տաճարը: Բարբոտիմեոս առաքյալը քանդել էր այդ տաճարը՝ նրա տեղում հիմնադրելով Ս. Աստվածածնի եկեղեցին:  
 7 Մեկ ուրիշ ավանդության համաձայն, Ս. Աստվածածնի վանքի մոտ է բաղված Մարիամ Մագդալինացին, որը Տիրամոր այս հնագույն պատկերին ծառայելու համար եկել էր այստեղ եւ ճգնել մի այլ միջ («Արևիկ», 1888 թ., ք. 1238):

րունին հարցում է ուղղում Մովսես Խորենացուն գիտե՞նալու, թե Հոգեաց վանքում գտնվող Տիրամոր սքանչելագործ պատկերը որտեղից եւ իմ կողմից է բերվել այստեղ: Խորենացին իր պատասխանում նախընտրում է եղած տարբերակներից ամենահավանականը, որ այն նկարված է Հովհաննես ավետարանչի կողմից նոճենու փայտի վրա եւ բերվել է Հոգեաց վանք: Ինչպես ասացինք, Խորենացու հաղորդած տեղեկությունները համառոտ են եւ, ըստ էության, ավանդապատում: Ի դեպ, աղբյուրները վկայում են, որ նույն Ս. Աստվածածնի եկեղեցու բեմահարթակի վրա փորագրված է եղել նաեւ Տիրամոր մանկան հետ հարթաքանդակը: Մինչեւ մեծ եղեռնը դա ծառայել է որպես ուխտագնացության սրբավայր:

Էկֆրագիսային ժանրի բնույթը մեր հետաքրքրության առումով սկիզբառավ թովմա Աթորունու շարունակողից, կապված Աղթամարի պալատի նկարագրության հետ: «Այդ նկարագրությունը,- գրում է հայ ճարտարապետության պատմության հմուտ գիտակ Ստեփան Մնացականյանը,- եզակի երեւոյթ է ամբողջ հայ մատենագրության մեջ եւ արտակարգ հետաքրքրություն է ներկայացնում»<sup>2</sup>: Հետեւեմք մեր մշակույթի պատմության մեջ բացառիկ հետաքրքրություն ներկայացնող Անանուն Աթորունու տողերին. «Եվ քանզի արքունի դռանը հավաքվել էին բազում արհեստավորներ, պատվավոր մարդիկ, ժողովված երկրի բոլոր ազգերից, որոնք կարող էին անել արքայի կամեցածը եւ իսկույն գործը կատարում էին համաձայն հրամանի: Թագավորը հրամայեց նրանցից մեկին՝ ճարտարապետ, իմաստուն եւ հանճարեղ մարդուն, շինելու քառանկյունի պալատ, որի լայնության եւ երկարության չափը քառասուն կանգուն էր. նույնքան էր եւ բարձրությունը: Սրա որմերի լայնությունն ուներ 3 մեծաքայլ չափ տարածություն: Որմերն անապակ կրի եւ քարի զանգված էին, որ իրար էին խառնված ինչպես կապարի ու պղնձի համաձուլվածքը: Պալատի շինվածքը, հիմքից մինչեւ օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն առանց սյուների, ինչն արդարեւ մտքից վեր է ու զարմանքի արժանի: Պալատն ուներ նաեւ կամարակապ խորաններ, անկյուններ եւ գեղապաճույճ բոլորապատեր, որոնց ոչ միտքը կարող է թվարկել եւ ոչ էլ աչքերը՝ զննել: Այն ուներ նաեւ երկնքի պես բարձր, ոսկեզարդ եւ լուսաճաճանչ գմբեթներ, որոնց, եթե մեկը կամենար նայել, թագավորին իբրեւ պատիվ անելով, նախ պետք է հաներ զլիսից խույրը եւ ապա, տանջելով պարանոցը, հազիվ կարողանար նշմարել զանազան ներկերով նկարված պատկերները»<sup>3</sup>: Այնուհետեւ պատմիչը մանրամասնորեն նկարագրում է պալատի որմնանկարները՝ գահի վրա նստած արքան շրջապատված սպասավորներով ու պատանիներով, սուսերամարտիկների խմբեր ու պարող աղջիկներ, թռչուններ եւ զանազան այլ կենդանիներ: Պատմիչը հիացումով ու հպարտությամբ է արձանագրում, որ պալատի մեծությունը եղել է ահավոր ու ապշեցնող: Այնտեղ եղել են մանր հորինվածքով ու հրաշալի գեղեցկությամբ կտրատված դռներ, որոնք բացվելիս երկփեղկվում եւ թարմ օդ էին ներս բերում, զովացնում: Իսկ երբ դռան փեղկերը փակվում էին, երեւում էին որպես պատկերային մի ամբողջություն<sup>4</sup>: Մենք բերեցինք պատմիչի վկայությունից մեկ հատված միայն: Վստահ կարող ենք ասել, որ միջնադարյան մշակություն «էկֆրագիս» կոչվող ժանրի այսպիսի կատարյալ օրինակ չի հանդիպում, նույնիսկ ժանրի հիմնադիր Ֆոտեոս պատրիարքի մոտ:

Սյուն նշանավոր Խուշարձանը, որի գեղարվեստական հարդարանքի մասին տեղեկությունները քաղում ենք գրավան աղբյուրներից, Ապարանից Ս. Աստվածածնի եկեղեցին է<sup>5</sup>: Այս Խուշարձանի ուսումնասիրման առումով եւս, ցավոք, հայ արվեստագիտության մեջ գրեթե ոչինչ չի արված<sup>6</sup>:

Ապարանից Ս. Աստվածածնի եկեղեցու գեղարվեստական հարդարանքը իր հարստությամբ եւ ճոխությամբ թերեւս միայն զիջած լինի Գագիկ Աթորունու հպարտությունը հանդիսացող Աղթամարի սուրբ Խաչ տաճարին:

Գրիգոր Նարեկացին 983 թ. հրավիրվել է եկեղեցու բացման հանդիսավոր արարողությանը եւ հիշատակի ու նկարագրության սքանչելի եռոդեր թողել այդ մասին: Բերենք մի հատված. «Զորմոցն վերագրութեան վիմախարիսխ արձանակառոյց կերպիւ առկայեաց. եւ իբր յականց վանեաց յեռելոց ճարտարագործ արուեստայարմար՝ բազմատեսակ երփնիւ նորոգեաց: Եւ զեզեկիւլեան տեսլեանն երեւոյթ անյօղն եւութամբ՝ նոր մանուկեամբ իբր զգայութիւն իրի արծարծեաց: Եւ իբր զմիոստայնի վերարկու գեղեցկա-

տիպ յանգուածով զբովանդակն սկսեալ յարմարեաց:

...Եւ զարտաքին որմոցն զարձանս մաքրապար տեղւոյն բերկրութեան՝ ճառագայթանշոյլ բեհեզատիպ զգեստութն պճնեաց: Իսկ զդիմաց դրանդեացն դիրս՝ սքանչելի քանդակագործեալ քառաշուրթն զարմանազան՝ իբր զծաղկեղէն զգեստուց հանդերձունս սրբաբեհեզն պատմունճանի առագաստանուէր գեղապանձ հարսիմն՝ ի զլուխ ծայրից լրուէ թեզանեաց շրջապարարեաց: Իսկ զդրանցն երեսաց տիպ՝ նկարակերտ յանգուածատաշեալ կարմրերփեան փայտիւք՝ եւ փղուց ոսկերօք՝ սեռակոտոր այլայլուկ գունովք երանգոց՝ յարակից կայիւք ի պէսպէս մասանց արհեստիւ կապեաց...»<sup>7</sup>:

Անանուն Աթորունի եւ Գրիգոր Նարեկացի. մեկը մյուսից արժանահավատ, մեկը մյուսից պատկերավոր ու ճոխ լեզվով թողել են մեր նախնիների ստեղծած արվեստի մասին բացարձակապես սկզբնաղբյուրային դեր ունեցող տեղեկություններ<sup>8</sup>:

Ի դեպ, անենք, որ 17-րդ դ. վերանորոգման ժամանակ փոխվել է Ապարանից վանքի հին դուռը, դրա տեղը դնելով փայտյա փորագրազարդ մի նոր դուռ<sup>9</sup>:

Հայ պատմագրության ճշմարտապատում հեղինակներից մեկին՝ Ստեփանոս Օրբելյանին ենք պարտական Սյունյաց աշխարհի մի քանի եկեղեցիների, հատկապես դրանց գեղարվեստական հարդարանքի մասին թողած թանկագին տեղեկությունների համար: Անդրադառնալով մեծ իշխան Աշոտի եւ Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հովհաննեսի կառուցողական ծեռնարկումներին, պատմիչը հպարտությամբ գրում է. «Եվ այսպես կառուցեց եկեղեցին՝ երկնակամարի նման գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան եւ մարդկանց՝ քավարան, տաշած վեմերով ու քերած քարերով, որմնադրական արհեստով հարմարեցված, տեսնողների աչքերը շլացնող: Նրա բարձրությունը հարյուր կանգուն էր, երկարությունը՝ քառասունութ, լայնությունը՝ քսանչորս. իր մեջ ընդգրկում էր չորս խորան, բացի ավագ խորանից: Եվ այդ շենքի մեջ Սոդոմոնյան տաճարի կամ Զորաբաբելյանի նմանողությամբ կառուցել էր երկու հրաշակերտ սյուներ՝ բոյոսն ու հաքումը, որոնք անուր կերպով միացված խարիսխներով եւ գեղեցկադիր ու բարձրաբերձ թակուղադներով ամբողջապես վերցրած պահում են կամարակապ, քարակարկառ հարկի հսկայական ծանրությունը...

Տասնմեկ տարում ահա այսպես ավարտելուց հետո եկեղեցու մոտ, հարավային դռան դիմաց կանգնեցնում է մի զարմանալի սյուն՝ սուրբ երրորդության անունով, երեսապատված մանր քարերով, երեսուն կանգուն բարձրությամբ: Պարսպում է եկեղեցին սրբատաշ քարերով, ապա եւ վանքը կոփածո քարերով...

Հարթելով ու հավասարեցնելով տեղանքը՝ շինում է նաեւ սրբաշեն սեղանատներ, արհեստանոցներ... եկեղեցու բակում կառուցում է աղոթատուն եւ սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների համար դամբարանատեղ<sup>10</sup>:

Մեծ կաթողիկեի կառույցից որոշ ժամանակ անց, կատարվում է եկեղեցու ներքին գեղարվեստական հարդարանքը: Ահա այդ մասին պատմիչը գրում է. «Այս Հակոբը Ֆրանկ ժողովրդի հեռավոր աշխարհից բերել տվեց նկարիչներ եւ զոռախներ, այսինքն պատկերագործներ, եւ աստվածաբնակ տաճարի լուսաճեմ հարկերը ամբողջովին, վերեւից մինչեւ ներքեւ, անսահման ծախսերով նկարազարդել տվեց: Փրկչի պատկերն էլ, խիստ ահեղ տեսքով, նկարել տվեց աստվածագործ սեղանի ճիշտ դիմացը, վերեւից՝ երկնքի բոլորակը մեծ կամարի վրա, իսկ սրանից ներքեւ, սեղանի շուրջ՝ մարգարեների, առաքյալների ու հայրապետների բնականակերպ նկարները՝ շատ խորհրդավոր: Այսպես ամբողջը համատարած կերպով զարդարեց այնպես, որ նայելիս տեսնողների աչքերը շլանում էին: Եվ երբեք չէր թվում, թե (նկարները) ներկերով ու երանգներով են ստեղծված, այլ բոլորն էլ կենդանի (ու բնական) են, եւ նայողները զարհուրում ու պատկառում էին նրանցից...»<sup>11</sup>:

Պարզ է դառնում, որ մեր պատմիչներն ու գրականության մեծությունները աներեւակայելի նախանձախնդրություն են ցուցաբերել ազգային արժեքների նկատմամբ: Նրանք ականատեսի իրենց տպավորությունները, ողջ պատկերային ամբողջականությամբ, թողել են գալիք սերունդներին, ամենայն ման-

1 Թուրք Սահակայ Աթորունից իշխանի առ երանելի վարդապետին Մովսես Խորենացի, «Սրբոյն հօրն մերոյ Մովսէսի Խորենացոյ մարինագրութիւնը», Վենետիկ, 1865, էջ 281-282: Բարսեղ Մարգարյանը առանձին ուսումնասիրություն է նվիրել այս պարմությանը - «Զննողաբութիւն ի վերայ թորոյն Մովսէս Խորենացոյ առ Սահակ Աթորունի եւ պարիկերի Տիրամօր ի Հոգեաց վանս («Բազմավէպ», 1887, էջ 97-116): Եվ ընդհանրապես այդ թեման քազմիցս շոշափվել էր հայ մարինագրության մեջ:

2 Ս. Մնացականյան, Արտամար, Երևան, 1983, էջ 23:

3 Թովմա Աթորունի եւ Անանուն. «Պարմութիւն Աթորունյաց րան, Երեւան, 1978, էջ 288: «Պարմիչը խոսում է նաեւ շինարարական աշխատանքների մասին, օրինակ, որ պալատի շինարարության վրա ծախսվել է 200 000 վիրդ երկաթ: «Պալատի հողակերպ ծախվներին համահեշտում մշակված էին նրա ինքնիքները: «Եթե մեկը կամենա, շարունակում է պարմիչը,- ըստ արժանվոյն, մանրամասն զովաբանել կառույցի ողջ զարդարանքը, ոսկեհամիշ ու գմբեթածածկ սրահները, զանազան գահույքները, որոնք փայլում էին գերախառնապես, մեկը մյուսից ավելի պայծառ, կարծում եմ, որ անհաստության չգրելով, կրտաբանվի եւ անկարող կլինի» (նույն տեղում, էջ 299):

4 Մասնագետները նշում են, որ պալատի այս շինարարությունը նախորդել է եկեղեցու կառուցմանը (Մ. Ա. Օրբելու, Памятник армянского зодчества на острове Ахтамар, «Известия Труды», М., 1968, с. 203):

5 Վանքը գտնվում է Վանա լճից հարավ-արեւմուտք, Բիրլիսի վիլայիթում, լեռնային դժվարամատույց վայրում, Ապարանք գյուղի հարևանությամբ: Հիշյալ վանքից հեռւմ մասունք է փոխադրվել պարմական Հայաստանի Նիզ գավառի Զասախ կենտրոնը, որի համար էլ վերջինս 10-րդ դարից անվանվել է Ապարան:

6 Գրականության մեջ այդ եկեղեցին հիշատակվել է սուկ որպես ճարտարապետական կառույց, այն էլ բոլորից: Նույնիսկ գոգորդություններ են անցկացվել Արտամարի Ս. Խաչ եկեղեցու հետ խաչաձև հարակազիք, վիրիարի կարողիկեն, սրբաբաշ քարերը (տես «-Բյուզանդիոն», 1904, p. 2994, «Լուսնա», 1900, էջ 222: Հ. Ինճիրճյան, «Նոր Հայաստան», էջ 162-163): Եկեղեցին ունեցել է նաեւ գեղեցիկ գանգակարում:

1 «Կարմրեղիմեան փայտի» - ըստ էության, խորը Աֆրիկայում աճող երևնուի փայտի մասին է. դժվար եւ բանկ չեղբ քերվող նյութ, որի վրա պարիկերներ են փորագրել: Մեզ հայրենի է երևնուի փայտից պարտապարված Եփրոկիայի (Արեւմտյան Հայաստան) 1473 թ. հայկական եկեղեցու պարիկերազարդ դուռը:

2 Փղոսկրից պարտապարված արվեստի գործեր հայ միջնադարյան արվեստում ծայրահեղորեն սակավադիպ են հանդիպում: «Էջմիածնի ավետարանի» փղոսկրյա 10 սալիկներից պարտապարված կազմը բացառություն է համարվել: Թիլիս դա է եղել պարմադր, որ եվրոպացի մասնագետները 7-րդ դ. այդ հիսնալի կորողը անադոյարացի կերպով համարել են ասորական կամ բյուզանդական արվեստի գործ: Իհարկե, հայ արվեստի խոշոր գիտակներ Ս. Տեր-Ներսիսյանը եւ Լ. Դուրմուշան հերքեցին այդ բյուր փեսակերը՝ ցույց տալով այդ կազմի ազգային պարիկաներությունը: Այսուհանդերձ, Նարեկացու վկայությունը խիստ կարեւորվում է, որ Ապարանից վանքում եղել են նաեւ փղոսկրից պարտապարված նկարակերպ իրերը: Ուրեմն փղոսկրի գործածությունը հայ միջնադարյան արվեստում բացառիկ երեւոյթ չի եղել. ուղղակի դրանց նմուշները բանկարծք իր լինելով մեզ չեն հասել:

3 Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից Վանախանի մարինագրութիւնը, Վենետիկ, 1840, էջ 382-383:

4 Այդ եկեղեցու կապակցությամբ Հ. Ա. Էփրիկյանը գրում է. «Եկեղեցու փառավորությունը եւ գեղեցկությունը, քանդակներու, նկարներու մանր բանվածքներու, մեծազին գեղարուց եւ սպասուց նկարագիրը՝ մանրամասն ըրած է Գրիգոր Նարեկացին («Պարիկերազարդ քանշարիկի քառարան, Ա. Վենետիկ, 1903, էջ 239):

5 Այդ դուռն նակարին փորագրված է եղել «Թուականին բաւն եւ մի յօրեկան հօր քառակ հարքեակ (1638 թ.) ի նմին նորոգեցաւ դուռն սուրբ Խաչին չեռամբ էտր... (՝ վարդապետին» (Հ. Համազասկ Ոսկեւան, Վասպուրական-Վանի վանքի, Գ. Վինենա, 1947, էջ 822-823):

6 Սյունիանու Օրբելյան, Սյունիի պարմություն, Երեւան, 1986, էջ 208:

7 Նշվ. գիրքը, էջ 228-229:



րամասնությամբ նկարագրելով մշակութային այդ սխրանք-կոթողները: Ըստ էության, վերջիններս «սկզբնաղբյուրային» կարելու դեր են կատարում, ասես դառնալով իուշարձանին համարժեք (երբ դրանք այլևս կանգուն չեն):


Կան նաեւ դեպքեր, երբ անցյալի փաստերի ճշմարիտ վկայություններն այսօր եվրոպական չափանիշներով ուղղումներ են մտցնում արվեստի այս կամ այն ճյուղի պատմության մեջ: Ահա մի ակնառու օրինակ: Նկարագրելով Հաթերքի իշխան Վախտանգի (13-րդ դ.) կնոջ Արզու խաթունի առաքինություններն ու շնորհքը, Կիրակոս Գանձակեցին գրում է. «Յայսմ ամի եղև աւարտ հռչակաւոր եւ խնդատես եկեղեցւոյն Գետկայ, զոր շինեաց վարդապետն Մխիթար իւր միաբանօքն՝ ձեռնտուութեամբ Վախթանկայ խաչենցւոյ՝ տեառն Հաթերքոյ, եւ եղբարց իւրոց՝ Գրիգորոյ, եւ Գրիգորիսի, եւ Խոյրանայ, եւ Վասակայ, եւ այլոց իշխանաց բարեպաշտաց, որոնց Զրդին՝ Դաթի եւ Սադունին, նաեւ քոյր սոցա, որուն անուն էր Արզու խաթուն, կին Վախթանկայ Հաթերքեցւոյ:

Սա բազում ինչ օժանդակ եղել, արար եւ վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովը՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մագոյ այծից կակղազունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակերպ եւ նկարեալ պատկերօք, ճգրտագոյն հանուածովը՝ տնօրինականօք Փրկչին եւ այլոց սրբոց, որ հիացուցանէր զտեսողս: Եւ որք տեսանէին, օրհնութիւն տային աստուծոյ, որ ետ կանանց իմաստութիւն ուստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան...»<sup>1</sup>: Պատմիչի այս խոսքերը որոշակիորեն վերաբերում են գորելենային տիպի գործվածքին եւ համապատասխանում նույնիսկ գորելենի հանրագիտարանային ձեւակերպումներին<sup>2</sup>: Ահա եւ, մեզ մոտ պատրաստվել է մեծ վարագոյր՝ գործված նուրբ մշակված բրդյա (այծի) թելերից, որոնք ներկվել են ամենատարբեր գույներով<sup>3</sup>: Ընդ որում, վարագոյրի վրայի պատկերները գործվածքի ֆակտուրայի առանձնահատկության պատճառով, քանդակային տպավորություն են թողել:

Ինչ խոսք, եթե ճակատագիրը բարեհաճ լիներ հայ ուստայնագործ կանանց նկատմամբ, եւ նրանց աշխատանքներից առանձին նմուշներ պահպանված լինեին, ապա, հավանաբար, քաղաքակիրթ աշխարհին հարկ չէր լինի Եվրոպայում, 17-րդ դարում (փաստորեն Արզու խաթունի աշխատանքներից չորս հարյուր տարի անց) ստեղծված նմանատիպ գործվածքները կոչելու ֆրանսիացի ներկարար եղբայրներ Գոբելենների անունով<sup>4</sup>:

Եթե այսօր շոշափվում է հայկական շալւերային (գորելենատիպ) գործվածքի ավանդույթի հարցը, ապա, շնորհիվ Կիրակոս Գանձակեցու մանրամասն նկարագրության: Դա պետք է դիտել որպէս ազգային արվեստի հիմնավորց մի ճյուղ, որի նշանակությունը դուրս է գալիս հայ արվեստի պատմության շրջանակներից:

Անանուն Արծրունու, Գրիգոր Նարեկացու, Ստեփանոս Օրբելյանի եւ Կիրակոս Գանձակեցու ճշմարտապատում նկարագրությունները հիմնականում ավերված կամ բոլորովին չպահպանված հուշարձաններին վերաբերող, ոչ միայն «էկֆրագիս»-ային ընտիր նմուշներ են, այլեւ այդ հուշարձանների «գոյության» թանկագին մասունքներ:



Նկ. 1. Աղբակի ա. Բարդուղիմեոս եկեղեցին (13 - 17 դդ.), այժմ ավերված

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 215: Ի դեպ, այս փաստը մեր կողմից հրապարակվել է ռուսերեն լեզվով Մոսկվայում, "Армянский гобелен. традиции и их возрождение" ("Искусство", N1, Москва, 1989, с. 13-16):

<sup>2</sup> Гобелены выполнялись цветными шерстяными и шелковыми нитками... по рисункам (картинам). Гобелены ткались на специальных ручных станках методом выборочного ткачества... Характерная особенность гобеленов - рубчатая поверхность лицевой стороны, создаваемая нитями основы, и неровная поверхность оборотной стороны, образуемая швами и нитями утка (БСЭ, т. 6, изд. 3, с. 620):

<sup>3</sup> Արզու խաթունը եւ նրա դուստրերը պապկերագարդ մման գորելեն վարագոյրներ են գործել նաեւ Հաղպատավանքի, Դադի վանքի ու Մակարավանքի համար (Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 216):


<sup>4</sup> Որոշակի իմաստով գորելեն է կոչվել Փարիզի Սեն-Մարսել արվարձանում հիմնադրված (1662 թ.) մանուֆակտուրայի արտադրանքը՝ չեղքով գործած գորգ-նկար: Որպես բազավորական մանուֆակտուրա՝ նրա գլխավոր մասնաշենքը դարձավ 15-րդ դ. հայտնի ներկարարներ Գորելենների նախկին արհեստանոցը եւ դրանից հետո այդ անունով էլ կոչվեց մանուֆակտուրան եւ նրա արտադրանքը:

Դեռևս 1897 թ. մեծափաստակ Գարեգին Հովսեփյանը Էջմիածնի ճեմարանի ուսանողների հետ Նոր Բայրակերի գավառում շրջագայելիս Նորադուզ գյուղում տեսել է մի հին գորելեն, որն իբրև «անպիտք եւ հնացած վարագոյր» չգված է եղել եկեղեցու հին զգեստանոցը: Թվում է որանք միջնադարից եկող հայկական գորելենի մնացորդներ են եղել:





Նկ. 2. Կույս Հռիփսիմե, որմնանկար, Վարազա վանք (13 - 17 դդ), այժմ՝ ավերված



Նկ. 3. Եկեղեցական հին վարագույր





Նկ. 4. Գեղարդի և Ասպիվածանի քարայր - մարտիկի որմնանկարներ (13-րդ դ.), այժմ ավերված

Гравара Акопян Грачевич - ЖАНР "ЭКФРАЗИС" В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ И ИСКУССТВЕ - В 867г., в результате государственного переворота, на трон Византийской империи поднялся Василий I, выходец из Македонии, армянин по происхождению, основавший новую Македонскую династию. Время его правления было ознаменовано серьезными экономическими и политическими преобразованиями, что способствовало большому подъему в области культуры и искусства. Развертывается бурная строительная деятельность, одной из значительных достижений которой явилась "Новая церковь". Церковь эта, к сожалению, не сохранилась - она была разрушена крестоносцами. Однако до нас дошло подробное и образное описание ее, составленное патриархом Фотием. Написанное в возвышенном духе, отмеченное своеобразным стилем изложения, получившим название "экфразис", это произведение явилось первым дошедшим до нас литературным памятником этого жанра.

Литературные памятники подобного рода сохранились и в армянской письменной культуре. Именно благодаря подобным произведениям дошли до нас сведения о многих замечательных постройках, не сохранившихся до наших дней. К числу первых армянских литературных произведений, написанных в жанре "экфразис" принадлежит повествование продолжателя Истории Товмы Арцруни (Хв.), в котором подробно описан царский дворец Арцрунидов, находившийся на острове Ахтамар, в дальнейшем полностью разрушенный. Благодаря вдохновенному описанию, оставленному нам автором X в., мы имеем возможность хотя бы приблизительно представить каким было это некогда великолепное сооружение.

Автор статьи полагает, что к числу литературных произведений жанра "экфразис" принадлежат также замечательные описания Григора Нарекаци (апаранской церкви св. Богородицы), Степаноса Орбеляна (сюникской церкви) и Киракоса Гандзакци (одного из памятников XIII в.).

## ՀԱԿՈՐ ՊՈՂՈՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(1888-1943)

ՓԻՒՄՈՓԱ, ԵՐԱԺԵՏԱԳԵՏ, ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, ԼԵՋԱՐԱՄԱՆ  
ԹԱՐԳՄԱՆԻՉ, ՄԵԹՈԴԻՍՏ-ՄԱՆԿԱՎԱՐԺ

(Ծննդյան 110-ամյակի առթիվ)

Ծնվել է դեկտեմբերի 11/23-ին Արեւմտյան Հայաստանի Ալաշկերտի գավառի Խաստուր գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի երկդասյա ուսումնարանում:

1901-ին ընդունվում է Էջմիածնի Գեորգյան ճեմարանը եւ 1910 թվականին գերագանցության դիպլոմով ավարտում լսարանային բաժնի լրիվ դասընթացը:

1910-12 թթ. Թավրիզի հայկական դպրոցում աշխատում է որպես ուսուցիչ: 1912 թ. ճեմարանի գործուղումով, «Կանտի իմացաբանությունը» ավարտաճառի համար (տպագրվել է «Արարատ» ամսագրի 1910-11 թթ. տարբեր համարներում), իբրեւ Ղուկասյան ֆոնդի մրցանակակիր, մեկնում է Գերմանիա՝ բարձրագույն կրթություն ստանալու:

1912-19 թթ. Բեռլինի, Լայպցիգի, Ցյուրիխի համալսարաններում ուսումնասիրում է փիլիսոփայություն, գրականագիտություն, լեզվաբանություն, երաժշտության տեսություն, միաժամանակ դասեր առնում Ըմիդտի հայտնի ջութակի դասարանում: «Զարգացման գաղափարի վերլուծությունը» մենագրության համար նրան շնորհում են փիլիսոփայական գիտությունների դոկտորի աստիճան, 1919 թ. Ցյուրիխի համալսարանում:

1919 թ. վերադառնում է հայրենիք. եռամսհով աշխատում է Երեւանի միջնակարգ դպրոցներում, միջնակարգ մասնագիտական եւ բարձրագույն ուսումնական հաստատություններում որպես ուսուցիչ, մեթոդիստ, դասախոս, գիտաշխատող: 1927-40 թթ. աշխատում է Երեւանի պետական համալսարանում, *հայկական մանկավարժականում* /1928-32/ դասավանդելով փիլիսոփայություն, գերմաներեն լեզու, ռոմանագերմաներեն լեզուների պատմություն, ավելի ուշ ստանձնում է նաեւ արեւմտաեվրոպական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնը, 1935-37 թթ. ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի արվեստի բաժնի վարիչի պաշտոնները:

1941-ին տպագրության է ներկայացնում «Մանյակ» ժողովածու հայ ժողովրդական երգերի» (ներածությամբ եւ կոմենտարիաներով) գիրքը, որ լույս է տեսնում 1958 թ. Երեւանում:

Հարությունյանի գործունեությունն ընդհատվել է 1941-ին, կյանքի թելը կտրվեց ուժերի ծաղկման շրջանում 1943 թ. զոհ գնալով ստալինյան բռնատիրությանը:

Նրա փիլիսոփայական, երաժշտագիտական, թարգմանական գործերը լուրջ ավանդ են հայ հոգեւոր մշակույթի ասպարեզում:

### Տպագրվել են՝

1. *Կանտի իմացաբանությունը* (Գեորգյան ճեմարանի ավարտաճառ, «Արարատ», 1910-11 թթ. համարներում, Վաղարշապատ, 1912):
2. *Սկրտիչ Պեշկեթաշյան* («Արարատ», Վաղարշապատ, 1912):
3. *Զարգացման գաղափարի վերլուծությունը* (գերմաներեն, Ցյուրիխ), 1920:
4. *Մայրենի լեզվի եւ նրա դասավանդման հոդվածաշարը*, («Ժող. լուս.» ամսագիր, 1927-1930 տարբեր համարներում):
5. *Կարմիր ուղի*, պրակ Ա., 1929, պրակ 1930 (Հ. Հարությունյան, Խ. Սարգսյան, Տ. Վանյան):
6. *Նոր աշխարհ*, (դասագիրք), Ե., 1930 (Հ. Հարությունյան, Խ. Կանայան, Ա. Բակունց):
7. *Ղեպի նոր կյանք* (դասագիրք), Ե., 1931:
8. *Երաժշտական քրեստոնմատիա*, պրակ 1, Ե., 1933:
9. *Լեզվի մասին*, «Տեղեկագիր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի», N8, Ե., 1934 (էջ 106-141):
10. *Կոմիտասի գեղարվեստական ուրվանկարը*, «Խորհրդային գրակ.», N9, 1939թ.:
11. *Մանյակ ժողովածու հայկական ժողովրդական երգերի*, Ե., 1958:

### Թարգմանական՝

1. *Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա*, Ե., 1936, (թարգմ. Ա. Առաքելյան, Հակ. Հարությունյան):
2. *Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Հատընտիր նամակներ*, Խ. 1, Ե., 1936 (թարգմ. Հ. Հարությունյան, Գ. Զազեթյան, Ս. Տիգրանյան):
3. *Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը*, Ե., 1938:
4. *Յեզեկ, Ղասախոսություններ էսթետիկայի մասին* (էսթետիկում), «Խորհրդ. գրականություն», Ե. 1939:
5. *Գյոթե, Բանաստեղծություններ*, Ե., 1946 (թարգմանչի անունը չի նշված եւ պետք է վերականգնել):

### Հարությունյանի մասին՝

1. *Է. Կարազոգյան, Հ. Հարությունյանի «Մանյակ» ժողովածուի երգերի համառոտ վերլուծությունը*, Լրաբեր, (հաս. գիտ.) N8, 1989:
2. *Հ. Ղանալանյան, Հոդվածներ ու հուշեր*, Ե., 1979:
3. *Ս. Սահակյան, Հակոբ Հարությունյան*, Ե., 1985: